Նախագիծ

Արձանագրային

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին»» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացության նախագծի մասին

Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացության նախագծին և այն սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով:

Գևորգ Դանիելյան

Պ-825- 12.02.2010-ՊԻ-010/0

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիան շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը, որը դրսևորվել է կողմերի և նրանց ներկայացուցիչների, դատավարության մյուս մասնակիցների և դատական նիստին ներկա գտնվող այլ անձանց կողմից դատարան ներկայանալուց չարամտորեն փուսափելով կամ դատավորի օրինական կարգադրությանը չենթարկվելով կամ դատական նիստի կարգը խախտելով կամ այլ գործողություն կատարելով և վկայում է դատարանի կամ դատական նիստի կարգի նկատմամբ բացահայտ արհամարհանքի մասին՝»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Պ-825[1]- 12.02.2010-ՊԻ-010/0

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 1-ի քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիան շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու, նիստի բնականոն ընթացքին խոչընդոտելու, իրենց դատավարական իրավունքներից անբարեխղճորեն օգտվելու կամ դատավարական պարտականությունները անհարգելի չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում դատարանն իրավունք ունի կողմերի և նրանց ներկայացուցիչների, դատավարության մյուս մասնակիցների և դատական նիստին ներկա գտնվող այլ անձանց նկատմամբ կիրառելու հետևյալ դատական սանկցիաները.»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀՀ դատական օրենսգրքի 63-րդ, ՀՀ քաղ. դատ. օր. 115-րդ, ՀՀ քր. դատ. օր. 314.1-րդ և ՀՀ քր. օր. 343-րդ հոդվածների առաջին մասերը վերաբերում են քրեական և քաղաքացիական գործերի քննության ընթացքում դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորող, նիստի բնականոն ընթացքին խոչընդոտող, իրենց դատավարական իրավունքներից անբարեխղճորեն օգտվող կամ դատավարական պարտականություններն անհարգելի չկատարող կամ ոչ պատշաճ կատարող անձանց նկատմամբ կիրառվող սանկցիաներին, այդ թվում՝ քրեական պատասխանատվությանը: Ըստ որում, Դատական օրենսգրքի, Քաղաքացիական դատավարության և Քրեական դատավարության օրենսգրքերի հիշյալ հոդվածները պատասխանատվության ենթարկվելիք սուբյեկտների կազմը սահմանել են ոչ միատեսակ: Դրանց կազմը երեք օրենսգրքերում (Դատական, Քաղ. դատ. և Քր. դատ.) սահմանված է գրեթե նույն կերպ և ընդգրկում է կողմերին (քրեական գործերով՝ մեղադրանքի և պաշտպանության, քաղաքացիական գործերով՝ գործին մասնակցող անձանց), դատավարության մյուս մասնակիցներին, դատավարությանը մասնակցող այլ անձանց, մինչդեռ Քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասը նշված սուբյեկտներից առանձնացրել է միայն վկային, տուժողին և պաշտպանին ու միայն նրանց այդպիսի գործողություններն է համարել քրեորեն պատժելի արարք: Նման իրավակարգավորմամբ Քր. օր.-ը ըստ էության ոչ համաչափ վերաբերմունք է դրսևորել դատավարության մասնակիցների նկատմամբ: Մասնավորապես՝ տարբերակել է նույն գործողությունները կատարող պաշտպանին դատախազից, վերջինիս դնելով արտոնյալ պայմանների մեջ:

Սույն օրինագիծը կոչված է վերացնելու նույն հարցը կարգավորող օրենսգրքերի միջև եղած հակասությունները, վերականգնելու դատավարության բոլոր մասնակիցների իրավահավասարությունը, քանի որ ՀՀ սահմանադրական դատարանն իր 14.01.2010թ. ՍԴՈ-851 որոշմամբ Քր. օր. 343-րդ հոդվածի 1-ին մասը իրավամբ ճանաչել է ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածի և 19-րդ հոդվածի 1-ին մասերի պահանջներին հակասող և անվավեր:

Քր. օր. 343-րդ հոդվածի 1-ին մասի նոր խմբագրության մեջ գործածված «օրինական» բառը վերցված է Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետից, որն անձին ազատությունից զրկելու հիմք է համարում ոչ թե դատարանի կարգադրությանը, այլ դատարանի օրինական կարգադրությանը չենթարկվելը:

Օրինագծում միասնականացվել են նաև Քր. և Քր. դատ. օրենսգրքերի ձևակերպումները դատավարությանը մասնակցող սուբյեկտների հարցում:

Ռ. Պետրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԳԻՐՔ

ՀՈԴՎԱԾ 314.1. ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՆԿՑԻԱՆԵՐԸ

1. Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսեւորելու, նիստի բնականոն ընթացքին խոչընդոտելու, իրենց դատավարական իրավունքներից անբարեխղճորեն օգտվելու կամ դատավարական պարտականությունները անհարգելի
չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում դատարանն իրավունք ունի դատավարության մասնակիցների, քրեական դատավարությանը մասնակցող անձանց եւ
դատական նիստին ներկա գտնվող այլ անձանց նկատմամբ կիրառելու հետեւյալ դատական
սանկցիաները.

1) նախազգուշացում.
2) նիստերի դահլիճից հեռացնելը.
3) դատական տուգանք.
4) պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով համապատասխանաբար
գլխավոր դատախազին կամ Փաստաբանական պալատ դիմելը:

2. Սանկցիան պետք է համաչափ լինի արարքի ծանրությանը եւ նպատակ հետապնդի
ապահովելու դատարանի գործունեության բնականոն ընթացքը:

Նախազգուշացումը եւ նիստերի դահլիճից հեռացնելը կիրառվում են նույն դատական նիստում կայացվող դատարանի արձանագրային որոշմամբ:

3. Նիստերի դահլիճից հեռացումը չի կարող կիրառվել տվյալ պահին ցուցմունք տվող վկայի նկատմամբ:

4. Նիստերի դահլիճից հեռացնելու մասին որոշումն անհապաղ կամովին
չկատարելու դեպքում կատարվում է հարկադիր կարգով Հայաստանի Հանրապետության
դատական դեպարտամենտի միջոցով:

5. Դատական տուգանքը կիրառվում է դատավարության մասնակիցների եւ գործին
մասնակցող անձանց նկատմամբ: Դատական տուգանքը կարող է կիրառվել մինչեւ 100.000
դրամի չափով: Դատական տուգանքի չափը որոշվում է դատարանի հայեցողությամբ,
սակայն բացի արարքի ծանրությունից, պետք է հաշվի առնվի նաեւ արարք կատարողի
անձը: Դատական տուգանքը կիրառվում է նույն դատական նիստում կայացվող դատարանի
առանձին որոշմամբ: Դատական տուգանք կիրառելու մասին որոշումը կամովին

չկատարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման "Դատական ակտերի հարկադիր
կատարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:
6. Ամբաստանյալի կողմից դատական նիստի կարգը խախտելու եւ նիստի բնականոն
ընթացքին խոչընդոտելու կամ նախագահող դատավորի կարգադրությունները չկատարելու
դեպքում դատարանը կիրառում է նախազգուշացում: Միաժամանակ, նախագահող դատավորն
ամբաստանյալին բացատրում է, որ դատական նիստի կարգը կրկին խախտելու եւ նիստի
բնականոն ընթացքին կրկին խոչընդոտելու կամ նախագահող դատավորի
կարգադրությունները չկատարելու դեպքում նա կարող է հեռացվել նիստերի դահլիճից:
Նույն դատական նիստում ամբաստանյալի կողմից դատական նիստի բնականոն ընթացքին
կրկին խոչընդոտելը կամ նախագահող դատավորի կարգադրությունները չկատարելը հիմք
է սույն հոդվածի առաջին մասի 2-րդ կետով նախատեսված սանկցիան կիրառելու համար,
որի դեպքում գործի քննությունը շարունակվում է ամբաստանյալի բացակայությամբ,
սակայն դատավճիռը հրապարակվում է ամբաստանյալի ներկայությամբ:
Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսեւորելու դեպքում դատարանը
ամբաստանյալի նկատմամբ սույն հոդվածի առաջին մասի 2-րդ կետով նախատեսված
սանկցիան կիրառում է առանց նախազգուշացման, եւ գործի քննությունը շարունակվում
է ամբաստանյալի բացակայությամբ, սակայն դատավճիռը հրապարակվում է ամբաստանյալի
ներկայությամբ կամ հրապարակումից հետո անհապաղ հանձնվում է նրան:
Սույն մասով նախատեսված կարգով ամբաստանյալը նիստերի դահլիճից հեռացվում է
մինչեւ 10 օր ժամկետով:
7. Գործի քննությանը մասնակցող դատախազի եւ գործի քննությանը որպես կողմի
ներկայացուցիչ կամ պաշտպան մասնակցող փաստաբանի նկատմամբ կիրառվում են
բացառապես սույն հոդվածի առաջին մասի 1-ին եւ 4-րդ կետերով նախատեսված
սանկցիաները: Գլխավոր դատախազին կամ Փաստաբանական պալատ դիմելը իրականացվում է
նույն դատական նիստում կայացվող դատարանի առանձին որոշմամբ:
Սույն հոդվածի առաջին մասի 4-րդ կետով նախատեսված դատական սանկցիան
պարտադիր հիմք է դատախազի կամ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ
հարուցելու համար:
8. Դատական սանկցիա կիրառելու մասին դատարանի որոշումը հրապարակման պահից
ուժի մեջ է: Դատական տուգանք կիրառելու մասին դատարանի որոշումը կարող է

բողոքարկվել վերադաս դատարան հրապարակման պահից երեք օրվա ընթացքում:

9. Դատական սանկցիայի կիրառումն արգելք չէ սանկցիայի ենթարկված անձին օրենքով նախատեսված այլ պատասխանատվության միջոցների ենթարկելու համար:

(314.1-րդ հոդվածը լրաց. 21.02.07 ՀՕ-93-Ն, փոփ. 05.02.09 ՀՕ-45-Ն օրենքներ)

ՀՈԴՎԱԾ 343. ԴԱՏԱՐԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆՀԱՐԳԱԼԻՑ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ

1. Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը, որը դրսեւորվել է վկայի
կամ տուժողի կամ պաշտպանի դատարան ներկայանալուց չարամտորեն խուսափելով կամ
դատավորի կարգադրությանը չենթարկվելով կամ դատական նիստի կարգը խախտելով կամ
այլ գործողություն կատարելով եւ վկայում է դատարանի կամ դատական նիստի կարգի
նկատմամբ բացահայտ արհամարհանքի մասին՝
պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը
հարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով:
2. Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը, որը դրսեւորվել է դատաքննության մասնակիցներին վիրավորելով՝
պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից
երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով:
3. Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը, որը դրսեւորվել է պաշտոնեական լիազորությունների իրականացման առնչությամբ դատավորին վիրավորելով՝
պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից
հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով:
(343-րդ հոդվածը փոփ. 16.12.05 ՀՕ-33-Ն օրենք)
(343-րդ հոդվածի 1-ին մասը՝ այնքանով, որքանով կիրառելի չէ նաեւ դատավարության այլ մասնակիցների նկատմամբ, ճանաչվել է անվավեր 14.01.10 թիվ ՍԴՈ-851 որոշում)